ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-7-3-Ա

ք. Երևան 31.08.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի օգոստոսի 31-ի նիստում քննարկեց 2016 թվականի հուլիսի 13-ին «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Նուրազյանի կողմից ներկայացված «BOCKEBA3 33 KAPACA» (հայտ No20151460) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքայն նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «KARAS» («Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ, ք. Երեւան, Մ. Խորենացու 1-ին փակուղի, 8-րդ շենք, բն. 2ա, AM, N 19275, N 18470) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 115-րդ կետի 2-րդ ենթակետի, 117-րդ կետի 9-րդ, 10-րդ ենթակետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվում է նշանների համընկնող մասերի բնույթով եւ նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով: Տվյալ դեպքում գրանցված համակցված ապրանքային նշանի հիմնական ընկալման տարր հանդիսացող «KARAS» բառային տարրը, չնայած առանձին տարբերությունների, այն է՝

այբուբենի, որի տառերով գրված է բառը, ներառված է հայտարկված բառային ապրանքային նշանի մեջ՝ կազմելով նրա վերջնամասը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ մերժված ապրանքային նշանում «KAPACA» բառի ապրանքային նշանում մյուս տարրերի հետ նույն մեծությամբ օգտագործումը սպառողի մոտ կարող է շփոթություն առաջացնել ավելի վաղ գրանցված և փորձաքննության որոշման մեջ հակադրված գրանցումների նկատմամբ: Հետևաբար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն ներկայացված ապրանքային նշանը չի կարող գրանցվել:

Բողոքարկողը ներկայացրեց իր տեսակետը, որ մերժումը անհիմն է և ներկայացված փաստարկները բավարար են ապրանքային նշանը գրանցելու համար:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Նուրազյանի կողմից ներկայացված՝ «BOCKEBAЗ 33 KAPACA» (հայտ No20151460) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ